


Սակայն եթե ստոյգ եւս իցէ գալուստ ասպետացն՝ յետոյ ուրեմն թուի եղեալ, յորժամ ինքնին կամեցաւ Լեւոն հաճել զկամս Քահանայապետին: Իսկ զարդիս տեսեալ սորա՝ զի ընդ ասպետացն նաեւ զկուսակիցս նոցին Լատինս մերժեաց Լեւոն՝ ՚ի վիճակաց նոցին որ ընդ իւրով իշխանութեամբ, թուի կասկածեալ եթէ մի՛ գուցէ իսպառ գրգռեալ ասելութեամբ հալածեցէ եւ զուխտ Անտիոքայ եկեղեցոյն, կամ թէ գիտելով զհովանալ նորա ՚ի Լատինաց՝ համարձակութիւն առցէ այլազգին դրակից Անտիոքայ. վասն որոյ գրեաց (7 յունիս, 1211) առ սուլտանն Հալպայ Մելիք Տահեր՝ որդին Սալահէտտինի, զի՝ Թէ եւ ոչ ես քրիստոնեայ, ասելով, այլ խնամով թելարկես եւ սոցա, այսպէս արարեալ եւ Անտիոքեայց՝ մի՛ ինչ նեղեցես¹⁸⁹:



Ձոր կասկածերն Իննովկենտիոս՝ կատարեաց Լեւոն փոքր ՚ի շատե. զի զսպեալ եւ նուաճեալ զխորխտումն եւ զշարժումն Տաճարականացն, այնուհետեւ դիւրանայր նմա գրաւել եւ զԱնտիոք. եւ թեպէտ երդումն կռեալ եւ կնքեալ էր ընդ պատրիարքին՝ զինադուլ առնել, այլ ՚ի վերայ հասանել նախագրելոցն դիպաց, կամ լուծեալ համարէր զայն, եւ կամ այլով ինչ խորագիտութեամբ հնարէր ՚ի ձեռն այլոց գողանալ զտեղին, վասն որոյ այնքան աղէտք անցին, եւ մի՛ անձամբ երեւել: Ձորպէս իրացս ցուցանէ կշտամբական թուղթ Իննովկենտեայ առ Լեւոն, տուեալ ՚ի վեշտասաներորդ ամի քահանայապետութեանն, ՚ի 22 փեբրուար ամսոյ. յորմէ եւ ստուգի¹⁹⁰ ոչ անձամբ եկեալ Լեւոնի, այլ բազմութեամբ զօրաց առաքեալ զԲուրքէն՝ նստուցանել յաթոռ իշխանութեանն¹⁹¹. որք ոչ սակաւ

¹⁸⁹ Թուղթք Իննովկ. ԺԴ. ԿԹ:

¹⁹⁰ Թուղթք Իննովկ. ԺԶ. Բ:

¹⁹¹ In terram Antiochiæ Rupinum nepotem tuum cum non parve exercitu transmisisti.